ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1628

26.04.2016թվ.

ՀՀ ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան,

Դիտորդական խումբը սույն թվականի ապրիլ ամսին այցելություն կատարելով ՀՀ ոստիկանության Լոռու ՄՎ Տաշիրի բաժնի ՁՊՎ արձանագրել էր.

Թերություններ՝

1. Ընդհանուր ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ՁՊՎ-ն գտնվում է ամբողջովին փոշոտ վիճակում:
2. Լոգարանում բացակայում էր տաք ջուրը:
3. Ինչպես նախորդ այցելությունների ընթացքում, այնպես էլ ապրիլ ամսվա այցելության ընթացքում, արձանագրվել է, որ սպասքը գտնվում էր կեղտոտ վիճակում և ման լվանալու պարագաները բացակայում էին:
4. Խցերի պատուհանները չեն բացվում և օդափոխություն կատարելը անհնար է տվյալ ՁՊՎ-ում:

Այսպիսով՝ խնդրում ենք ուսումնասիրել ներկայացվածը և տալ մեկնաբանություն:

<< ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ
ՄՏՄ № 2188
03 05 2016

Հարգանքներով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝

<< ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ՄՏՄ № 2815
2 05 2016թ.

Հ. Սահակյան

ՀՀ ք.Երևան 0009,Սարմենի 60,
www.policemonitoring.org
Հեռ./ֆաքս: (+374 10) 52 81 87
E-mail: info@policemonitoring.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

0025 ք.Երևան, Նալբանդյան 130, Հեռ.՝ (010) 59-65-94, Ֆաքս՝ (010) 59-63-11, էլ.փոստ staff@police.am

№ 212-1-1871 «23» 05 2016 թ.

Ձեր 26.04.2016թ. թիվ 2621/1628 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի նախագահ Հասմիկ Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից 2016թ. ապրիլի 11-ին ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Տաշիրի բաժնի ձերբակալվածներին պահելու վայր կատարած այցելության ընթացքում արձանագրված թերություններն ուսումնասիրվել են ՀՀ ոստիկանության շտաբում և Լոռու մարզային վարչությունում:

ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն ներկայացվում են ներքոշարադրյալ մեկնաբանությունները:

Թերություններ.

1. Դիտորդների խմբի այցելության պահին ոստիկանության Տաշիրի բաժնի ՁՊՎ-ն գտնվել է մաքուր վիճակում, քանի որ այն ամեն օր մաքրվում է մաքրարարի կողմից:
2. Ոստիկանության Տաշիրի բաժնի ՁՊՎ-ի լոգարանում առկա է էլեկտրական ջրատաքացուցիչ, այն գտնվում է սարքին վիճակում և անհրաժեշտության դեպքում ձերբակալվածները ապահովվում են տաք ջրով:
3. Ոստիկանության Տաշիրի բաժնի ՁՊՎ-ի սննդի տաքացման սենյակում գտնվող սպասքը պահվում է պահարանում՝ մաքուր վիճակում, միաժամանակ առկա է մեկանգամյա օգտագործման սպասք, ինչպես նաև սպասք լվանալու պարագաները:
4. Ոստիկանության Տաշիրի բաժնի ՁՊՎ-ի խցերի պատուհանները չեն բացվում, քանի որ ՁՊՎ-ի տվյալ հատվածը սահմանակից է մասնավոր բնակելի տան հողամասին, սակայն խցերի օդափոխությունը կատարվում է պատուհանների վրա տեղադրված էլեկտրական օդափոխիչների միջոցով:

ՀՀ ոստիկանության շտաբ